ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հանցագործության անձնային գործոնը մարդու մեջ ամրակայված իմաստային հոգեբանական գոյացությունների մի համակարգ է, որը պայմանավորում է նրա այլափոխված, այլասերված վերաբերմունքը սոցիալական իրականության նկատմամբ (9, էջ 305): Միաժամանակ, հանցագործի անձնային գործոններ ասելով հասկանում են սոցիալապես ոչ-ընդունելի հայացքները, հետաքրքրությունները, հարաբերությունները, կողմնորոշումները, աշխարհայացքը, դիրքորոշումները և այլն, այսինքն այն ամենը, ինչը բխում է անձից: Հանցագործի անձը, նրա անձնային գործոնները բացահայտվում են վարքի (հանցավոր արարքի) միջոցով, այսինքն այն գործունեության միջոցով, որը վերջինս ծավալում է հասարակության մեջ:

Հանցավոր վարքի նախապատմությունը սկսվում է անտիկ ժամանակներից: Հին աշխարհի փիլիսոփա Պլատոնը, խորհելով հանցավորության մասին, նրա գլխավոր աղբյուրը համարում էր հարուստների և աղքատների միջև երկպառակությունը և հակասությունը (6): Արիստոտելը հանցավորության հիմնական պատճառը համարել է հասարակության մեջ հավասարության և արդարադատության բացակայությունը: Այդ բոլորը ծնում են բարքերի խեղաթյուրում, որը հանգեցնում է սոցիալական շեղումների (6): Հռոմեացի իրավաբան Ցիցերոնը հանցագործության գլխավոր աղբյուր էր համարում արտաքին հաճույքների նկատմամբ դրսևորվող ժլատ կրքերը, ինչպես նաև անպատիժ մնալու հույսը: Սակայն ինչպես նշում էր Ցիցերոնը, պատիժը պետք է համապատասխանի ոչ միայն պատճառված վնասին, այլև արարքի սուբյեկտիվ կողմին (8): Հռոմեացի փիլիսոփա, քաղաքական գործիչ Սենեկան նախ և առաջ ուշադրություն է դարձնում ոչ թե պատճառված վնասի մեծությանը, այլ հանցագործություն կատարած անձի բնութագրին, նրա կամքի բովանդակությանը (8):

Քրեական իրավունքի դասական դպրոցի ներկայացուցիչ Չեզարե Բեկարիան իր «Հանցագործություն և պատիժ» աշխատությունում հանցագործության դեմ պայքարելու միջոց է համարում ոչ այնքան պատիժը, որքան բարքերի, լուսավորության բարելավումը (4), իսկ համաձայն Չեզարե Լոմբրոզոյի

բնածին հանցագործի տեսության, հանցագործները իրենցից ներկայացնում են որոշակի անկում մարդու զարգացման մեջ և տարբերվում են հոգեպես ու ֆիզիկապես (15):

Համաձայն քրոմոսոմային տեսության, հանցագործության պատճառը մարդու քրոմոսոմային համակարգի շեղումն է, այսինքն xyy հավաքակազմի առաջացումը, որը հանգեցնում է ագրեսիվ վարքի /14/:

Էմիլ Դյուրկհեյմը «Սոցիոլոգիայի մեթոդ» (7) գրքում հիմնավորեց դրույթ այն մասին, որ հանցավորությունը նորմալ սոցիալական երևույթ է ցանկացած հասարակության համար և հանդիսանում է նրա անհրաժեշտ տարրը, ինչպես նաև հանցագործը ամենևին էլ հակասոցիալական էակ չէ:

Ամերիկացի սոցիոլոգ Ռ.Մերտոնի տեսության հիմքը կազմում են երկու հիմնական հասկացություններ «անոմիա» և հասարակության «սոցիալական կառուցված»: Ընդ որում առաջին երևույթը հանդիսանում է որպես երկրորդ հասկացության սահմաններում տեղի ունեցող պրոցեսների հետևանք (23):

Դիֆերենցիալ կապերի տեսությունը առաջարկվել է ամերիկացի կրիմինոլոգ էդվին Սաթերլենդի կողմից, համաձայն որի, հանցավոր վարք դրսևորվում է, երբ անձը կապվում է վատ շրջապատի հետ: «Վատ շրջապատը» հանդիսանում է դելիկվենտ վարքի դրդիչ (22):

Ստիգմատիզացիայի տեսությունը հիմնված է այն վարկածի վրա, որ անհատը ձևավորվում է որպես հանցագործ, քանի որ հասարակությունը նրան «հանձնարարում է» այդպիսի դեր (22):

Մարդու վարքի ուսումնասիրման հոգեբանական տեսությունները հիմնական ուշադրություն են դարձնում անձնավորության վրա: Ի տարբերություն սոցիոլոգների, հոգեբանները մշակել են նաև դեվիանտ վարքի տեսությունները: Շեղվող /դեվիանտ/ վարքը անձի կայուն վարքն է, որը շեղված է ընդունված սոցիալական նորմերից, իրական վնաս է պատճառում հասարակությանը, ինչպես նաև ուղեկցվում է անձի սոցիալական դեզադապտացիայով: Տարբերում են շեղված վարքի հետևյալ խմբերը. հակահասարակական /դելիկվենտ/ վարք, ասոցիալ /անբարոյական/ վարք, աուտոդեստրուկտիվ /ինքնաքայքայիչ/ վարք (10, էջ 15):

Հակահասարակական (դելիկվենտ) վարքն իրավական նորմերին հակասող վարք է, որը սպառնում է հասարակական կարգին և շրջապատող մարդկանց բարեկեցությանը (10, էջ 33):

Մարդու վարքը մեկնաբանվում է տարբեր հոգեբանական տեսությունների կողմից, որոնցից ոչ մեկը միանշանակորեն ճիշտ կամ սխալ չէ, և որոնցից բոլորը կարող են նպաստել ամբողջացնելու վարքի ըմբռնումը:

Ըստ հումանիստական տեսության ներկայացուցիչ Մասլոուի, հանցագործության առաջնային խթան է հանդիսանում բազային պահանջմունքների անբավարարվածությունը (23, էջ 299): Ռոջերսը ես–ի զարգացման համար կարևորում է ոչ պայմանական դրական հայացքը: Եթե ծնողները առաջարկում են միայն պայմանական դրական հայացք, երեխայի ես–ը կարող է խեղաթյուրվել, որն էլ կարող է հակահասարակական վարքի հիմք հանդիսանալ (25): Հոգեվերլուծական տեսության հիմնադիր Ֆրոյդը կենտրոնանում էր անգիտակցական պրոցեսների՝ որպես մարդու վարքի դետերմինիզմի վրա (1): Ալֆրեդ Ադլերը վարքի դրդապատճառ է համարում անլիարժեքության զգացումից դեպի կատարելության գնալու ձգտումը: Անլիարժեքության զգացումը առաջանում է, երբ իրական ես–ի և իդեալական ես–ի միջև կա անհամապատասխանություն (16): Կ. Հորնին նշում է, որ իդեալական է, երբ ծնողները սիրում են, պաշտպանում են երեխաներին և նա զտնվում է անվտանգության մեջ: Արհամարհանքը և մերժումը երեխային դարձնում են չար, որը նա անվանում է հիմնային թշնամություն (16):

Հոգեբանության պրոֆեսոր, քրեահոգեբան Կ. Բարտոլը (3) համոզված է, որ մեր համոզմունքները, արժեքները, ինքնազգացողությունը և մտքերը մեր վարքի գլխավոր դետերմինանտներն են: Մարդկանց մեծ մասը ձգտում է ապրել համաձայն ներքին ստանդարտների և փոխազդել այլ մարդկանց հետ համապատասխան մարդկային բնույթը տեսնելով: Ըստ Բարտոլի, եթե մեր ընկերները և նրանք, ովքեր հանդիսանում են մեզ համար նմանակման օրինակ, մարդու գոյության պայմանները և կյանքն ընմբռնում են այս կամ այն կերպ, մենք կարող ենք նմանապես գործել: Եթե դաժանությունը, անուշադիր վերաբերմունքը շրջապատի նկատմամբ և եսասիրական դիրքորոշումները նորմա են, ապա դրանք կարող են իրենց արտացոլումը գտնել նաև մարդկանց նկատմամբ մեր մոտեցման մեջ և հանցավոր վարքի մեր ընմբռնման մեջ: Ավելին, եթե մենք ընդունում ենք որպես զենք այն եզրակացությունը, որ «այդպես բոլորն են վարվում», մենք չեզոքացնում ենք այն ամոթալի պիտակը, որով նշանակված է հակահրավական վարքը: Երիտասարդությունը այն տարիքն է, երբ մենք սկսում ենք ձևավորել կյանքի մասին մեր հիմնական պատկերացումները: Շատ դեպքերում ոլինկվենտությունը համարվում է արժեքների արտահայտություն, որոնք անչափահասը ընմբռնել է, կամ որին ստիպված է եղել հետևել:

Ռուս քրեագետ Դուխովսկին հանցագործության գլխավոր պատճառը համարում էր հասարակական կարգը, «հասարակության վատ տնտեսական կառույցը, վատ դաստիարակությունը և մի շարք այլ պայմաններ» (14): Ի հակադրություն դրան, Դ.Դրիլը մեծ ուշադրություն դարձրեց հանցագործության

անհատական գործոններին: Ըստ նրա հանցավորության աղբյուրները երկուսն են՝ անձնական և սոցիալական, ընդ որում երկրորդը որոշում են առաջինները (14):

Վ.Ն. Կուդրյավցևը նշում է, որ յուրաքանչյուր վարք, այդ թվում՝ հակահասարակական, հանցավոր, ենթարկվում է պատճառականության օրենքին, ունի պատճառական բացատրություն: Ըստ նրա հակահասարակական վարքը ծագում է երեք պատճառական կապերի փոխազդեցության արդյունքում, որոնք արտացոլում են անցյալը, ներկան, ապագան: Անցյալը որոշել է տվյալ մարդու ողջ փորձը, նրա անձի առանձնահատկությունները, ներկան իրադրությունն է, որում նա գտնվում է հանցագործություն կատարելուց առաջ: Ապագան հանդես է գալիս իր արարքի և դրա հետևանքների մտավոր մոդելի ձևով: Ապագան այստեղ ենթադրելի է, երևակայական: Սա հատկապես պետք է նշել հանցավոր վարքի ժամանակ, քանի որ հանցագործի մտավոր մոդելները արտացոլում են ռեալ իրականությունը քիչ թե շատ խեղաթյուրված (13, էջ 16):

Յու.Մ. Անտոնյանը (2) գրում է «Անձնավորության հոգեբանական օտարացման ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալ շատ հանցագործությունների անձնային, ներքին պատճառները» /1, էջ 7/: Ըստ Ա.Մ. Յակովլևի «Մարդու վարքը հանդիսանում է նրա կողմից նրան շրջապատող սոցիալական միջավայրում եղած հնարավորություններից վարքի որոշակի տեսակի ընտրության արդյունք» (24, էջ 50): Այդպիսի ընտրության ընթացքի վրա ազդում է ոչ միայն օբյեկտիվ հնարավորությունների առկայությունը և բովանդակությունը, այլև նրանց գնահատականը, «ինքնագնահատականը», ինչպես նաև նրա սուբյեկտիվ գնահատականը կոնկրետ իրադրության վերաբերյալ: Հետևաբար, նշում է նա, այդ փոխազդեցության ընթացը ուղիղ չի գալիս հասարակությունից դեպի անհատ, այլ ձեռքբերված անհատական փորձի միջոցով: Մարդը սոցիալական միջավայրի կողմից ազդեցության պասիվ օբյեկտ չէ: Հենց ինքը՝ սոցիալական միջավայրը նրա ձեռքերի և ուղեղի արդյունք է (24, էջ 52): Անձը հանցագործություն է կատարում, երբ խախտվում է անձի նորմալ փոխազդեցությունը սոցիալական միջավայրի հետ (24, էջ 57):

Ըստ Ս.Ա. Տարարուխինի, վարքի սոցիալական նշանակությունը որոշվում է կոնկրետ վարքի մեջ դրսևորվող անձի ուղղվածությամբ՝ հայացքների, մտքերի, համոզմունքների համակարգով և միտում արտահայտելով այդպիսի վարքի նկատմամբ, արժեքային կողմնորոշմամբ, սոցիալական դիրքորոշմամբ, հիմնական գործունեության մոտիվներով: (20, էջ 36):

Անձնավորության սոցիալական որակների դեֆորմացիան տեղի է ունենում աստիճանաբար: Անձնավորության վարքը դետերմինացված է

սոցիալական միջավայրով, բայց միջավայրի ազդեցությունը չի կարող հանգեցվել պարզ պրոյեկցիայի «միջավայր–վարք»: Որպեսզի օբյեկտիվ պատճառները սկսեն գործել, դրանք պետք է ոչ միայն անցնեն անձնավորության գիտակցության միջոցով, այլև առաջացնեն կոնկրետ հանցագործության որոշակի մոտիվներ /20, էջ 38/:

Ըստ Կ.Ե. Իգոշևի (11), հանցագործությունը դա մոտիվների արտահայտման և օբյեկտիվացման ձև է: Անձնավորության բացասական գծերը դրսևորվում են հանցագործության մոտիվներում և օբյեկտիվացվում են հանցավոր գործունեության մեջ միայն այն ժամանակ, երբ դրա համար կան որոշակի արտաքին պայմաններ: Իգոշևը նշում է, որ հանցագործության մոտիվը իր կոնկրետ ձևակերպումը, հոգեբանական ձևը և իրավաբանական նշանակությունը ստանում է միայն կապված հանցագործ անձի կենսագործունեության կոնկրետ պայմանների, իրադրությունների հետ: Իրադրությունը ֆոնի դեր է խաղում, որի վրա ձևավորվում է հանցավոր գործունեությունը:

Վ.Վ.Ռոմանովը հանցագործության հոգեբանական առանձնահատկությունները վերլուծելիս հենվում է այնպիսի հիմնարար հոգեբանական հասկացությունների վրա, ինչպիսիք են գործունեությունը, վարքը, գործողությունը, գործունեության մոտիվները և նպատակները: Նա գրում է. «Հանցավոր վարքը հոգեբանական տեսանկյունից վերլուծելիս, պետք է տեսնել ոչ միայն հանցագործությունը, այլ նաև հանցագործություն կատարելու որոշումը դետերմինացնող, դրա կատարումը ուղղող և հսկող ներքին, հոգեկան պրոցեսները և վիճակները» (19, էջ 254):

Ըստ Մ.Ի.Ենիկեևի (9), հանցավոր վարքը միայն անմիջական ներգործող գործոնների ուղիղ հետևանք չէ: Մարդու վարքում արտաքին հանգամանքների համակարգը երկատվում է նրա մոտ ձևավորված ներքին պայմանների համակարգի միջոցով: Դրանց է վերաբերում արժեքային կողմնորոշումների համակարգը, վարքի ընդհանրացված միջոցները, ինքնակառավարման հոգեդինամիկ առանձնահատկությունները: Վարքի ընդհանրացված ձևերը ձևավորվում են միջավայրի պայմանների ազդեցության տակ:

Վ.Ֆ. Պիրաժկովը նշում է հանցագործի անձի հետևյալ առանձնահատկությունները. 1 Անհատական իրավագիտակցության խաթարումները որպես նրա ոչ բավարար սոցիալականացման արդյունք, 2. անձնավորության պահանջմունքնային ոլորտի ախտաբանությունը 3. անձնային դիրքորոշումների խաթարումները, 4. հոգեկան զարգացման խաթարումները (17, էջ 17-18):

Ըստ Ս.Վ. Պոզնիշևի (18) հանցագործությունը երկու արմատ ունի. մեկը ընկած է հանցագործի անձի մեջ և բխում է նրա կառույցի առանձնա-

հատկություններից, մյուսը բաղկացած է տվյալ անձի համար արտաքին փաստերից, որն իր ազդեցությամբ նրան մղում է հանցավոր ճանապարհի:

Այսպիսով, հանցագործությունը այնքան շարունակական է, ինչքան շարունակական է մարդկության պատմությունը Երկրի վրա: Սկսած մարդկության ստեղծման պահից խոսվում է հանցագործության մասին: Պատմությունը ցույց է տալիս, որ տարբեր ժամանակաշրջաններում փոխվել են հանցագործության և այն կանխելու մասին պատկերացումները: Այժմ շատ է կարևորվում հանցագործի անձնային գործոնների ուսումնասիրությունը իրավաբանական հոգեբանության մեջ, որովհետև քրեածին իրադրության խթանող դերը անմիջականորեն կապվում է հանցագործի անձի մոտիվացիոն համակարգի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ֆրոյդ Զ.* Հոգվերլուծության ներածություն. /դասախոսություններ/: «Զանգակ-97», Երևան, 2002:
2. ***Антонян Ю.М.***, Психологическое отчуждение личности и преступное поведение. М. 1987.
3. ***Бартол К.***, Психология криминального поведения. М. " Олма – Пресс ", 2004.
4. ***Беккариа Ч.***, О преступлении и наказаниях. М. 1939.
5. ***Блекбори Р.***, Психология криминального поведения. Питер. 2004.
6. ***Варчук Т.В.*** Криминология. М. " Инфра – М " 2002.
7. ***Дюркгейм Э.***, О разделении общественного труда. Метод социологии. М., 1990.
8. ***Долговой А.И.***, Криминология. М.1999.
9. *Еникеев М.И.* Юридическая психология. М. 2003
10. ***Змановская Е.В.***, Девиантология (психология отклоняющегося поведения). М., " Академия ", *2004.*
11. ***Игошев К.Е.***, Типология личности преступника и мотивация преступного поведения. Горький 1974.
12. ***Клонингер. С.***, Теории личности. Питер, 2003.
13. ***Кудрявцев В.Н.***, Причинность в криминологии. М. 1968.
14. ***Кудрявцева В.Н., Эминова В.Е.***, Криминология. М. 1997.
15. ***Ломброзо Ч.***, Преступление. Пер. Г.Н. Гордона, СПб., 1900.
16. ***Малкина – Пых И.Г.***, Справочник практического психолога. М. " Эксмо, 2006.
17. *Пиражков В.Ф.* Криминальная психология. – М.: " Ось – 89 ", 2001.
18. ***Позднышев С.В.*** Криминальная психология. Преступные типы. – М.: ИНФРА – М, 2007.
19. ***Романов В.В.***, Юридическая психология. М. 1999
20. ***Тарарухин С.А.***, Преступное поведение. М. 1974.
21. ***Уотсон Д.***, Психология как наука о поведение. Украина 1926.
22. ***Фокс В.***, Введение в криминологию. М. " Прогресс " 1985
23. *Юридическая социология.* М. 2000.
24. ***Яковлев А.М.***, Преступность и социальная психология. М. 1971
25. ***Introduction to Psychology*** Tenth Edition 1990. USA.